

ՈՐՈՇ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ ՕՊԵՐԱՏԻՎ-ՅԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ  
ԳՈՐԾՈՒՆԵՐԻ ԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ա. Ղամբարյան  
իրավաբանական գիտությունների  
թեկնածու, դոցենտ

Ա. Խորխոռունի  
իրավաբանական գիտությունների  
թեկնածու

ՀՀ Ազգային ժողովի կողմից 22.10.2007թ. ընդունվել է «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքը (այսուհետ՝ ՕՀԳ մասին ՀՀ օրենք): Նշված օրենքի նախագիծը երկար տարիներ գտնվում էր շրջանառության մեջ, սակայն դրա ընդունումն հետաձգվում էր: ՕՀԳ-ի մասին ՀՀ օրենքի նախագիծը հանդիսացել է իրավաբանների և քաղաքական գործիչների բուռն քննարկման առարկա, արժանացել է տարաբնույթ գնահատականների: Շատ քաղաքական գործիչներ դեմ էին ՕՀԳ - ի մասին ՀՀ օրենքի ընդունմանը: Նման դիրքորոշում ունեցող անձինք, խորությամբ չընկալելով օպերատիվ-հետախուզական գործունեության էությունը և խնդիրները, նշում էին, որ ՕՀԳ-ի մասին ՀՀ օրենքի ընդունմամբ օրենքի մակարդակի է բարձրացվում մարդու մի շարք իրավունքների, մասնավորապես՝ հեռախոսային խոսակցության գաղտնիության, բնակարանի անձեռնմխելիության իրավունքների խախտումները: Նման մոտեցումները կարծում ենք զուրկ են իրավական հիմքերից և կարող են պայմանավորված լինել ոչ միայն օպերատիվ-հետախուզական գործունեության թերի ընթացմամբ, այլև քրեական դատավարության օրենսդրության չիմացությամբ: Նշված օրենքը սահմանում է օպերատիվ-հետախուզական միջոցառումների կիրառմամբ մարդու իրավունքների սահմանափակման ընթացակարգեր և վարույթային երաշխիքներ, որոնց պայմաններում իրավունքների սահմանափակումը, հետապնդվող նպատակի տեսանկյունից, համարվում է համաչափ, իսկ բուռն իրավունքի սահմանափակումը՝ իրավաչափ (ՕՀԳ-ի ընթացքում մարդու իրավունքների սահմանափակման խնդիրն առանձին ուսումնասիրության թեմա է):

Կարծում ենք ՕՀԳ-ի մասին ՀՀ օրենքի ընդունումը ոչ միայն անհրաժեշտություն է, այլև ինչ-որ իմաստով նաև ուշացած: Բանն այն է, որ նշված օրենքի անհրաժեշտությունը առավել արդիական դարձավ 1998թ.-ին ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քր. դատ. օր.) ընդունմամբ: Բանն այն է, որ ՀՀ քր. դատ. օր-ի առանձին ինստիտուտների գործողությունը պայմանավորված էր նշված օրենքի հետ, ՀՀ քր. դատ. օր-ի մի շարք հոդվածներում հղում էր կատարվում ՕՀԳ-ի մասին օրենքի վրա: Այսպես ՀՀ քր. դատ. օր-ի 281-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանի որոշման հիման վրա իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների տեսակները սահմանվում են «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքով:

Միևնույն ժամանակ, ՕՀԳ-ի մասին ՀՀ օրենքը զերծ չէ թերություններից և պարունակում է մի շարք վիճելի դրույթներ: Սույն հոդվածում կառանձնացնենք հետևյալ երկու հիմնախնդիրները.

1. ՕՀԳ-ի մասին ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ այն դեպքերում, եթե հեռախոսային խոսակցությունների վերահսկում օպերատիվ-հետախուզական միջոցառման անցկացման հապաղումը կարող է հանգեցնել ահաբեկչության կատարման կամ ՀՀ պետական, ռազմական կամ բնապահպանական անվտանգությանն սպառնացող իրադարձությունների կամ գործողությունների, ապա Ծառայությունը սույն հոդվածով նախատեսված կարգով ապահովում է այդ միջոցառումների իրականացումը, սակայն այդ օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման միջնորդությամբ Ծառայությանը դիմած մարմինը պարտավոր է 48 ժամվա ընթացքում Ծառայություն ներկայացնել դրանց իրականացումը թույլատրելու կամ չթույլատրելու մասին դատարանի որոշման քաղվածքը: Նախատեսված՝ 48 ժամվա ընթացքում դատարանի թույլտվությունը չներկայացնելու կամ սույն հոդվածով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացումը չթույլատրելու մասին դատարանի որոշման քաղվածքը Ծառայություն ներկայացնելու դեպքում դրանց անցկացումն անմիջապես դադարեցվում է, իսկ արդեն ձեռք բերված տեղեկությունները և նյութերը միջոցառումն իրականացնող մարմնի կողմից ենթակա են անհապաղ ոչնչացման: Սույն մասով նախատեսված

յուրաքանչյուր դեպքի վերաբերյալ Ծառայության ղեկավարը անհապաղ զեկուցում է ՀՀ Նախագահին<sup>1</sup>:

Փաստորեն ՕՀԳ-ի մասին ՀՀ օրենքի 32-րդ հոդվածը թույլատրում է օրենքով սահմանված դեպքերում հեռախոսային խոսակցությունը վերահսկել առանց դատարանի որոշման, սակայն 48 ժամվա ընթացքում Ծառայություն ներկայացնել դրանց իրականացումը թույլատրելու կամ չթույլատրելու մասին դատարանի որոշման քաղվածքը: Նման բովանդակության նորմ նախատեսված է ՀՀ քր. դատ. օր-ի 284 հոդվածի 8-րդ մասում:

Սույն հոդվածում ցանկանում ենք քննարկել հեռախոսային խոսակցությունը վերահսկելու միջոցառման իրականացումը չթույլատրելու մասին դատարանի որոշման քաղվածքը Ծառայություն ներկայացնելու դեպքի մասին ՀՀ Նախագահին անհապաղ զեկուցելու վերաբերյալ դրույթը:

Ինչո՞վ է պայմանավորված նշված դեպքում հեռախոսային խոսակցությունը վերահսկելը թույլատրելու մասին միջնորդությունը դատարանի կողմից մերժելու մասին ՀՀ Նախագահին զեկուցելու անհրաժեշտությունը, արդյոք այն բխում է ՀՀ Նախագահի սահմանադրական գործառույթներից, և ՀՀ Նախագահին այդ մասին զեկուցելը ինչպի՞սի իրավական հետևանքներ կարող է առաջացնել:

ՀՀ Սահմանադրության 49-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ՀՀ Նախագահը ՀՀ անկախության, տարածքային ամբողջականության և անվտանգության երաշխավորն է: Որոշ իրավաբաններ նշում են, որ քննարկվող դեպքերում օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացումը չթույլատրելու մասին դատարանի որոշման քաղվածքը Ծառայություն ներկայացնելու մասին ՀՀ Նախագահին զեկուցելը պայմանավորված է այն հանգամանքով, որ առանց դատարանի որոշմամբ հեռախոսային խոսակցությունը վերահսկելու դեպքերը կապված են ահաբեկչության կատարման կամ ՀՀ պետական, ռազմական կամ բնապահպանական անվտանգությանը սպառնացող իրադարձությունների կամ գործողությունների հետ, իսկ ՀՀ Նախագահը պետք է տեղեկացված լինի ՀՀ անկախության, տարածքային ամբողջականության և անվտանգության երաշխավորման սահմանադրական գործառույթների հետ առնչվող իրադարձություններին: Կարծում ենք նման մոտեցումը հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ՝

ա. ճիշտ է, ահաբեկչության կամ ՀՀ պետական, ռազմական կամ բնապահպանական անվտանգությանն սպառնացող իրադարձությունները կամ գործողությունները կարող են վտանգել ՀՀ անկախությունը, տարածքային ամբողջականությունը և անվտանգությունը, սակայն գտնում ենք, որ նման իրավիճակում ՀՀ Նախագահը որպեսզի իրականացնի իր սահմանադրական գործառույթներից բխող համապատասխան լիազորությունները, նրան պետք է զեկուցել ոչ թե դատարանի գործողությունների մասին, այլ բուն պետական, ռազմական կամ բնապահպանական անվտանգությանը սպառնացող իրադարձությունների կամ գործողությունների մասին:

բ. Եթե նույնիսկ ընդունենք, որ քննարկվող նորմը պայմանավորված է ՀՀ Նախագահի սահմանադրական գործառույթով, ապա հարց է ծագում՝ ինչո՞ւ ՀՀ Նախագահին չի զեկուցվում նաև այն դեպքի մասին, երբ դատարանը թույլատրում է շարունակել հեռախոսային խոսակցության վերահսկումը:

ՕՀԳ-ի մասին օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասում նախատեսված է՝ հեռախոսային խոսակցությունը վերահսկելու իրավիճակի վերաբերյալ ՀՀ Նախագահին տարեկան հաշվետվություն ներկայացնելու մասին դրույթ: Նշված հաշվետվությունում նշվում է այն միջնորդությունների թվաքանակը, որոնք բերվել են առանց դատարանի որոշման քաղվածքի, և հետագայում քաղվածքը չի ներկայացվել:

Պետք է տարբերակել կոնկրետ գործով դատարանի կողմից հեռախոսային խոսակցությունը վերահսկելը չթույլատրելու մասին ՀՀ Նախագահին զեկուցելը և

<sup>1</sup> ՕՀԳ-ի մասին օրենքի 32-րդ հոդվածը գերծ է նաև տեխնիկական վրիպակներից: Այսպես, նշված հոդվածի 3-րդ մասում հղում է կատարվում նույն հոդվածի 3-րդ մասին, այն դեպքում, երբ նշված մասի բովանդակությունից հասկանալի է, որ այն /հղումը/ վերաբերվում է նույն հոդվածի 2-րդ մասին:

տարեկան կտրվածքով հեռախոսային խոսակցության իրավունքի սահմանափակման վերաբերյալ հաշվետվություններ կայացնելը: Հեռախոսային խոսակցությունը վերահսկելու միջնորդությունների թվաքանակի վերաբերյալ (որոնք բերվել են առանց դատարանի որոշման քաղվածքի, և հետագայում քաղվածքը չի ներկայացվել) ՀՀ Նախագահին տարեկան հաշվետվության տրամադրման պահանջի առկայությունն ավելի քան անհասկանալի է դարձնում հեռախոսային խոսակցությունը վերահսկելու թույլտվությունը չներկայացնելու կամ այս միջոցառման իրականացումը չթույլատրելու մասին դատարանի որոշման քաղվածքը Ծառայություններ կայացնելու դեպքի վերաբերյալ ՀՀ Նախագահին զեկուցելու պահանջը:

Բացի այդ, քննարկվող հոդվածից չի երևում, թե դատարանի կողմից հեռախոսային խոսակցությունը վերահսկելու թույլտվություն չտալու մասին ՀՀ Նախագահին զեկուցելը ինչպիսի՞ իրավական հետևանքներ է առաջացնում: Նկատենք, որ կոնկրետ գործով ՀՀ Նախագահին զեկուցելու մասին նորմի բովանդակությունը ինչ որ տեղ կարող էր ավարտուն և ընկալելի լինել, եթե օրենքով նախատեսվեր քննարկվող դեպքի մասին ՀՀ Նախագահին զեկուցելու իրավական հետևանքները:

Նման հետևանքների մասին նորմատիվ բազայի բացակայությունը մի շարք իրավապաշտպանների հիմք է տալիս ենթադրելու, որ ՕՀԳ-ի մասին ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասում նախատեսված դեպքերում դատարանի կողմից հեռախոսային խոսակցությունը լսելը չթույլատրելու մասին ՀՀ Նախագահին զեկուցելու մասին դրույթը ոտնահարում է դատարանի անկախության մասին սահմանադրական պահանջը: Կարծում ենք, եթե ոչ իրավական տեսանկյունից, ապա առնվազն հոգեբանական առումով յուրաքանչյուր դատավոր կաշկանդվելու է ՕՀԳ-ի մասին օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերում հեռախոսային խոսակցությունը լսելու միջնորդությունը մերժելիս՝ նկատի ունենալով, որ այդ մասին զեկուցվելու է դատավորի լիազորությունները դադարեցնելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին:

2. ՕՀԳ-ի մասին ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքները, որոնք ձեռք են բերվել սույն օրենքով սահմանված կարգով, հանդիսանում են ապացույցներ, բացառությամբ սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 6-րդ և 9-րդ կետերով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքների: Օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքները որպես ապացույց դիտելու՝ օրենսդրի մոտեցումը կարելի է համարել դատաիրավական բարեփոխումների ձեռքբերումներից: Բանն այն է, որ դրանով վերջ կդրվի գործնականում առկա ոչ արդյունավետ գործընթացին, երբ հետաքննության կամ նախաքննության մարմինները, դատավարական գործողություններ կատարելու միջոցով<sup>2</sup> ապացուցողական նշանակություն էին տալիս օպերատիվ-հետախուզական մարմինների գործունեության արդյունքում ձեռք բերված տվյալներին:

Միևնույն ժամանակ օրենսդրի՝ օպերատիվ-հետախուզական տվյալները որպես ապացույց դիտելու դիրքորոշման ոչ ամբողջական և համակարգային իրականացումը օրենսդրական հակասությունների պատճառ հանդիսացավ: Խոսքը մասնավորապես, վերաբերում է օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքների ձեռք բերման կարգի և ՀՀ քր. դատ. օր-ի՝ ապացույցների տեսակների և հավաքելու մասին դրույթների հակասությանը:

ա. ՀՀ քր. դատ. օր-ի 104-րդ հոդվածի 2-րդ մասում սպառիչ թվարկվում են քրեական դատավարությունում ապացույցների տեսակները, որոնց թվում նշված չեն օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքները /արձանագրությունները/:

Եթե ընդունենք, որ օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքները համարվում են ՀՀ քր. դատ. օր-ի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետով նախատեսված այլ փաստաթղթեր, ապա այս պարագայում ՀՀ քր. դատ. օր-ի 122-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով այդ տվյալները որպես այլ փաստաթղթերն ապացույց են ճանաչվում վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ: Նման պարագայում մենք կրկին վերադառնում ենք

<sup>2</sup>Նման դատավարական գործողությունների կատարումը կարող է արդարացված լինել, եթե դրանք օպերատիվ-հետախուզական տվյալների հավաստիությունը ստուգելու նպատակ են հետապնդում:

խորհրդային և հետխորհրդային ժամանակաշրջաններում առկա այն վիճակին, երբ քննիչը որոշում պետք է կայացնի ապացույց ճանաչելու(իրեղեն ապացույց, այլ փաստաթղթեր)՝ ՕՅԳ-ի մասին ՀՀ օրենքով արդեն իսկ ապացույց համարվող փաստական տվյալները:

բ. ՕՅԳ-ի մասին ՀՀ օրենքի և ՀՀ քր. դատ. օր-ի ակնհայտ հակասության ուղորտներից է պացույցներ հավաքման գործող կարգը: Այսպես, ՀՀ քր. դատ. օր-ի 125-րդ հոդվածի համաձայն՝ ապացույցները հավաքվում են հետաքննության, նախաքննության և դատական քննության ընթացքում՝ սույն օրենքով նախատեսված քննչական և դատական գործողությունների կատարման ճանապարհով: Հայտնի է, որ օպերատիվ-հետախուզական միջոցառումները գործող օրենսդրության համաձայն՝ չեն համարվում ոչ քննչական, ոչ էլ դատավարական գործողություններ: Նման պարագայում ստացվում է, որ ՀՀ քր. դատ. օր-ում չի նախատեսվում ապացույցների հավաքման այնպիսի եղանակ, ինչպիսին է օպերատիվ-հետախուզական միջոցառումների կատարումը: Մինչդեռ, ՕՅԳ-ի մասին ՀՀ օրենքում սահմանվում են օպերատիվ-հետախուզական միջոցառման կատարման կարգը, դրա իրականացման ընթացքում ներկայացվող պահանջները և այլն:

Այսպիսով, ՕՅԳ-ի մասին ՀՀ օրենքի իմաստով ապացույց հանդիսացող օպերատիվ-հետախուզական գործողությունների արդյունքները, որոնք վարույթ իրականացնող մարմնի կողմից ՀՀ քր. դատ. օր-ով սահմանված կարգով չեն ճանաչվել որպես ապացույցներ, չեն կարող օգտագործվել որպես ապացույց, քանի որ ձեռք չեն բերված ՀՀ քր. դատ. օր-ով սահմանված կարգով: ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի համաձայն՝ արգելվում է օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցների օգտագործումը:

Կարծում ենք նշված հակասության լուծման լավագույն տարբերակը հետագայում օպերատիվ-հետախուզական որոշ միջոցառումներ որպես դատավարական գործողություն ճանաչելն է, և դրանք դատավարական օրենսդրությամբ կարգավորելը: Ի դեպ քրեական դատավարության նոր օրենսգիրքը մշակող Աշխատանքային խումբը որոշել է այն օպերատիվ-հետախուզական միջոցառումները, որոնց արդյունքները կարող են ունենալ քրեադատավարական (ապացուցողական) նշանակություն, կարգավորել քրեական դատավարության օրենսգրքով<sup>3</sup>:

Մինչև օրենսդրական փոփոխությունների իրականացումը, ՀՀ քր. դատ. օր-ի և ՕՅԳ-ի մասին ՀՀ օրենքի վերը նշված հակասությունների պայմաններում իրավապահ մարմինները պետք է ղեկավարվեն ՀՀ քր. դատ. օր-ով: Նման մոտեցումը պայմանավորված է ոչ միայն՝ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ կետով ամրագրված պահանջով, որի համաձայն՝ օրենսգրքի կարգավորման իրավահարաբերությունների ուղորտում ՀՀ մյուս բոլոր օրենքները պետք է համապատասխանեն օրենսգրքին, այլ նաև նույն օրենքի այն դրույթով, ըստ որի իրավական ակտերի հակասության դեպքում գործում են ավելի վաղ ուժի մեջ մտած իրավական ակտի նորմերը (Իրավական ակտերի մասին ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մաս): Նման պարագայում, ՕՅԳ-ի արդյունքում ձեռք բերված տվյալները քրեական դատավարությունում ինքնին չեն կարող համարվել ապացույց: Օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքներին ապացուցողական նշանակություն տալու նպատակով պետք է կատարվեն ՀՀ քր. դատ. օր-ով նախատեսված դատավարական գործողություններ:

Այսպիսով, ՕՅԳ-ի մասին ՀՀ օրենքը կարիք ունի բազմակողմանի քննարկման, որի արդյունքները կարող են օգտագործվել հետագա բարեփոխումների ընթացքում:

Սույն հոդվածում արտահայտված մտքերը հեղինակների մասնավոր կարծիքն են:

<sup>3</sup> Гамбарян А.С. Реформа досудебной стадии уголовного процесса в Республике Армения. Мат-лы междунаод. науч.-практ. конф., посвящ. 160-летней годовщине со дня рождения проф. И.Я. Фойницкого «Стратегии уголовного судопроизводства». 11-12 октября 2007 г. (Санкт-Петербург). <http://iuaj.net/modules.php?name=Pages &go=page&pid=230>